

Արդար բնակարանային ուղեցույց
հոգեկան առողջության, մտավոր
կամ զարգացման խանգարումներ
ունեցող անձանց համար



Այցելե՛ք www.hud.gov/fairhousing կայքը
կամ զանգահարե՛ք խտրականության
հարցերով ազգային թեժ գիծ

1-800-669-9777 կամ 1-800-877-8339 հեռախոսահամարներով
(Դաշնային տեքստային հեռախոսային ծառայություն)



Ի՞նչ է բնակարանային խտրականությունը:

«Արդար բնակարանների մասին» օրենքը, «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին» օրենքը և Վերականգնողական օրենքի 504-րդ բաժինը պաշտպանում են հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային խտրականությունից, ներառյալ հոգեկան առողջության, մտավոր կամ զարգացման խանգարումներ ունեցող անձանց: Բնակարանային խտրականության օրինակներ են.

- ◆ Հաշմանդամության պատճառով հրաժարվել ձեզ բնակարան վարձով տալը
- ◆ Դիմելու գործընթացում հաշմանդամություն ունենալու կամ ձեր հաշմանդամության բնույթի մասին հարցնելը, բացառությամբ այն դեպքերի, եթե բնակարանային մատակարարը չի հարցնում բոլոր դիմողներին, թե արդյոք նրանք հաշմանդամություն ունեն՝ որոշելու, թե արդյոք նրանք իրավասու են այնպիսի բնակարանների, որոնք մատչելի են միայն հաշմանդամություն ունեցող անձանց:
- ◆ Հաշմանդամության պատճառով ձեզ կամ այն անձին, ում հետ ապրում եք, տեղեկություններ տրամադրելուց կամ մատչելի բնակարաններ ցույց տալուց հրաժարվելը
- ◆ Մերժել ողջամիտ հարմարեցումներ տրամադրել կամ թույլատրել ողջամիտ փոփոխություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ձեզ կամ այն անձին, որի հետ ապրում եք, ով հաշմանդամություն ունի՝ բնակարանն օգտագործելու և վայելելու հավասար հնարավորություն ունենալու համար:
- ◆ Հաշմանդամության պատճառով որոշակի բնակելի միավորներում կամ բնակելի համալիրի հատվածներում ապրելու սահմանափակում
- ◆ Այլ պայմաններ դնելով մատչելի բնակարան վարձելու համար, ինչպիսիք են հաշմանդամության պատճառով ավելի բարձր վարձավճարը կամ երաշխիքային կանխավճար գանձելը
- ◆ Բնակարանին առնչվող այլ պայմաններ դնելը, քանի որ դուք բնակվել եք հաստատությունում, օրինակ՝ պահանջելով լրացուցիչ փաստաթղթեր կամ անցկացնելով ընտրության հաստատման համար լրացուցիչ գործընթաց:
- ◆ Հաշմանդամության պատճառով խստացված ստուգման չափանիշների պարտադրում
- ◆ Հաշմանդամության պատճառով ձեզ կամ այն անձին վտարելը, ում հետ ապրում եք
- ◆ Հետապնդել ձեզ կամ ձեզ հետ ապրող անձին հաշմանդամության պատճառով
- ◆ Բուժման կամ դեղորայքի վերաբերյալ հարցեր տալը
- ◆ Ձեզնից պահանջել, որ համաձայնվեք տեղավորվել կոլեկտիվ բնակելի տանը, որտեղ բացառապես կամ հիմնականում ապրում են նույն կամ համանման հաշմանդամություն ունեցող անձինք

Որո՞նք են պաշտպանված հոգեկան առողջության, մտավոր և զարգացման խանգարումների օրինակները:

Պաշտպանված հաշմանդամությունը ներառում է (բայց չի սահմանափակվում) հոգեկան առողջությունը, հոգեբանական, մտավոր և զարգացման պայմանները, ինչպիսիք են՝ օրգանական ուղեղի սինդրոմը, դեպրեսիան, անհանգստությունը, երկբևեռ խանգարումը, հետվնասվածքային սթրեսային խանգարումը (PTSD), ուսման առանձնահատուկ խանգարումները, աուտիզմը, Դաունի համախտանիշը, գլխուղեղի տրավմատիկ վնասվածքները, ալկոհոլիզմը և թմրամոլությունը (բացի ընթացիկ, թմրամիջոցների ապօրինի օգտագործմամբ պայմանավորված կախվածությունից):

Որո՞նք են ողջամիտ հարմարեցումներն ու փոփոխությունները:

Ողջամիտ հարմարեցումը կամ փոփոխությունները բնակարանի կանոնների, քաղաքականության, պրակտիկայի, ծառայությունների կամ ֆիզիկական կառուցվածքի փոփոխություններ են, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձը բնակարաններից օգտվելու և վայելելու հավասար հնարավորություն ունենա: HUD-ի կողմից ֆինանսավորվող բնակարաններում բնակելի, հասարակական կամ ընդհանուր տարածքի կառուցվածքային փոփոխությունները համարվում են ողջամիտ հարմարեցումներ, որոնք պետք է տրամադրի բնակարանային մատակարարը: Ողջամիտ հարմարեցման և փոփոխությունների հայցերի մի քանի օրինակներ կարող են ներառել.

- ◆ Ծառայողական նշանակության կենդանի բերելու խնդրանք, երբ գործում է «կենդանիների արգելման» քաղաքականությունը.
- ◆ Դիմում կամ այլ փաստաթղթեր լրացնելու հարցում օգնություն խնդրել
- ◆ Բնակարանային մատակարարին խնդրել թույլատրել բնակարանային օգնականի կամ այլ օժանդակ ծառայություններ
- ◆ Բնակարանային մատակարարին խնդրել դիմումների սահմանափակ ժամկետները երկարացնել կամ թույլ տալ ձկուն դիմումի ընթացակարգեր
- ◆ Վարձակալության վճարման ժամկետը փոխելու խնդրանք՝ մինչև սոցիալական ապահովության անաշխատունակության կտրոն կամ կարճաժամկետ, կամ երկարաժամկետ հաշմանդամության համար վճար ստանալը
- ◆ Շարժունակության կամ զգայական կարիքների հետ կապված բնակելի կամ ընդհանուր տարածքում ֆիզիկական փոփոխություններ կատարելու խնդրանք
- ◆ Խնդրանք մնալ հերթացուցակում՝ հաշմանդամության պատճառով ժամանակին հարցումներին չպատասխանելու համար
- ◆ Լրացուցիչ ժամանակ խնդրել բնակարան տեղափոխվելու համար, երբ դուք հայտնվում եք հերթացուցակի սկզբում, բայց չեք կարող տեղափոխվել հաշմանդամության հետ կապված պատճառով՝ բուժում կամ հոսպիտալացում
- ◆ Այլընտրանքային երաշխագրի ընդունում, օրինակ սոցիալական աշխատողի, երբ դուք հոսպիտալացման պատճառով ունենում եք սահմանափակ կամ ընդհանրապես չունեք վերջին վարձակալության կամ աշխատանքի պատմություն:

Դուք պետք է ունենաք հաշմանդամության հետ կապված խնդիր՝ պահանջվող հարմարեցման կամ փոփոխությունների համար: Բնակարանային մատակարարը կարող է լրացուցիչ սահմանափակ տեղեկատվություն խնդրել միայն այն դեպքում, եթե ձեր հաշմանդամությունը կամ հարմարեցման կամ փոփոխությունների վերաբերյալ ձեր կարիքը պարզ կամ հայտնի չէ մատակարարին: Բնակարանային մատակարարը նախքան մերժելը պետք է քննարկի ձեր խնդրանքը ձեզ հետ:

Ե՞րբ պետք է անձը հարմարեցում կամ փոփոխություն խնդրի:

Ցանկացած պահի, երբ ձեզ հարկավոր է փոփոխել բնակարանի վերաբերյալ կանոնը, քաղաքականությունը, պրակտիկան, ծառայությունը կամ ֆիզիկական կառուցվածքը՝ ձեր բնակարանից լիարժեք օգուտ քաղելու կամ HUD-ի կողմից ֆինանսավորվող ծրագրին կամ գործողություններին մասնակցելու համար: Դուք պետք է բացատրեք, թե ինչ տեսակի հարմարեցում կամ փոփոխություն եք խնդրում: Եթե հարցման անհրաժեշտությունը ձեր բնակարանային մատակարարին ակնհայտ է կամ արդեն հայտնի է, ապա ձեզ հարկավոր չէ որևէ այլ տեղեկատվություն տրամադրել: Եթե հարցման անհրաժեշտությունը մատակարարին ակնհայտ կամ հայտնի չէ, ապա ձեզ հարկավոր է բացատրել պահանջվող հարմարեցման կամ փոփոխության և ձեր հաշմանդամության կապը: Ձեզանից չի կարող պահանջվել մանրամասն բժշկական տեղեկատվություն տրամադրել:

Ընտանիքի անդամը, ընկերը կամ փաստաբանը նույնպես կարող է խնդրանք ներկայացնել ձեր անունից: Ձեզանից պահանջված չէ որևէ խնդրանք ներկայացնել որոշակի ձևով կամ որոշակի ժամանակ, բայց սովորաբար օգտակար է, եթե գրավոր հարցում եք անում: Գուցե ցանկանաք հարցնել, թե արդյոք բնակարանային մատակարարն ունի հարցում ներկայացնելու նախընտրելի ձև: Այնուամենայնիվ, բնակարանային մատակարարները պետք է հաշվի առնեն ողջամիտ հարմարեցման կամ փոփոխությունների վերաբերյալ ձեր խնդրանքները, նույնիսկ եթե դուք չեք օգտագործում նախընտրած ձևերը կամ ընթացակարգերը:

Արդար բնակարանային ուղեցույց հոգեկան առողջության, մտավոր կամ զարգացման խանգարումներ ունեցող անձանց համար



Բնակարանային խտրականության եք ենթարկվել՝ Կարող եք բողոք ներկայացնել HUD- ին կամ Ձեր տեղական արդար բնակարանային կենտրոնին:

Այցելե՛ք www.hud.gov/fairhousing/fileacomplaint կամ զանգահարե՛ք HUD-ի խտրականության հարցերով ազգային թեժ գիծ

1-800-669-9777 (անգլերեն/իսպաներեն) կամ 1-800-877-8339 (Դաշնային տեքստային հեռախոսային ծառայություն) հեռախոսահամարներով

Բնակարանային մատակարարի կողմից անօրինական է Ձեր դեմ քայլեր ձեռնարկելը, քանի որ բնակարանների արդար պայմանների վերաբերյալ բողոք եք ներկայացրել:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելե՛ք www.hud.gov/fairhousing կամ կապվե՛ք ձեր [տեղական HUD գրասենյակի](#), նահանգային կամ տեղական արդար բնակարանային կազմակերպության հետ: Խնդրում ենք այցելել նաև հետևյալ հղումները՝ ավելին իմանալու համար.

- ◆ [Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները բնակարանային արդար օրենքների ներքո](#)
- ◆ [Բաժին 504. Հաճախակի տրվող հարցեր](#)
- ◆ [«Արդար բնակարանների մասին» օրենքի համաձայն ողջամիտ հարմարեցում](#)
- ◆ [«Արդար բնակարանների մասին» օրենքի համաձայն ողջամիտ փոփոխություններ](#)
- ◆ [«Արդար բնակարանների մասին» օրենքի համաձայն կենդանի ունենալու պահանջը գնահատելը որպես ողջամիտ հարմարեցում](#)
- ◆ [HUD-ի հայտարարությունն Օլմստեդի նպատակների իրականացման գործում բնակարանի դերի վերաբերյալ](#)